ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/14101 03.12.2014թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան.

Սույն թվականի նոյեմբերի 28-ին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Վաղարշապատի ՁՊՎ, որի ընթացքում արձանագրել էր մի շարք թերություններ:

1. Խցերի պատուհանները գտնվում էին կեղտոտ վիճակում, որի պատճառով բնական լույսը չէր ներթափանցում խուց:
2. Երրորդ խցի բարձի երեսները, չորրորդ խցի ամբողջ սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: */ փաստը հաստատող լուսանկարներ – 1, 2,3,4,5,6 /*
3. Բուժսենյակում սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: Ջրի ծորակը չէր փակվում: : */ փաստը հաստատող լուսանկար – 7 /*
4. ՁՊՎ-ի կեղտոտ սպիտակեղենը պահվում էր բուժսենյակի դեղարկղի վրա՝ իրար վրա լցրած: Այն դեպքում, երբ ՁՊՎ-ների բուժսենյակները պետք է ամենաասանիտարահիգիենիկը և ստերիլը լինեն: */ փաստը հաստատող լուսանկար– 8 /*
5. Սննդի տաքացման սենյակում առկա սառնարանը գտնվում էր հակահիգիենիկ վիճակում և Դիտորդական խմբի համար անհասականալի էր, սառնարանի այդտեղ գտնվելու իմաստը, երբ նույնիսկ չէր աշխատում: */ փաստը հաստատող լուսանկարներ – 9,10,11,12 /*
6. Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր փոշոտ և կեղտոտ վիճակում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
Մուտք № 4943
05 12 2014 թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտք № 9303
05 12 2014 թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

7. Խցերի դռների բացվածքը այնքան փոքր էր, որ հնարավոր չէր մուտք գործել խուց, որի սահմանափակիչները ֆիքսված էին գետնին և հնարավորություն չկա այն լայնացնելու: / *փաստը հաստատող լուսանկար – 13 /*
8. Խցերում լվացարանները գտնվում էին կեղտոտ վիճակում: / *փաստը հաստատող լուսանկար – 14 /*
9. Դեղարկղում առկա էր ասկոֆեն տեսակի դեղահաբ, որի արտադրման և պահման ժամկետի ամիս- ամսաթիվը կտրված էր, այդ իսկ պատճառով կարծում ենք, որ դա արվել էր միտումնավոր՝ ժամկետն անց լինելը թաքցնելու նպատակով:

Այսպիսով, խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և միջոցներ ձեռնարկել ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3442 << 29 >> 12 2014թ.

Ձեր 03.12.2014թ. թիվ 2621/14101 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ նոյեմբերի 28-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Արմավիրի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

1.Դիտորդների խմբի հաշվետվության 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ կետերում նշված թերությունները վերացվել են:

2. ՁՊՎ-ի խցերի դռների բացվածքը ֆիքսող սահմանափակիչները տեղադրված են ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 113-րդ կետի պահանջներին համապատասխան, որի համաձայն դռան բացվածքի անկյունը ապահովում է մեկ անձի մուտք ու ելք և այն որպես թերություն չի կարող դիտվել:

3. ՁՊՎ-ի բուժսենյակում առկա են նախատեսված բոլոր տեսակի դեղամիջոցները: Թվով 3 տուփ <<Ասկոֆեն>> տեսակի դեղորայքները եղել են պիտանելիության ժամկետի մեջ, սակայն տուփերից մեկի երկու դեղահաբեր ձերբակալվածներին տրամադրելու ժամանակ հիգիենիկ նկատառումներից ելնելով կտրվել են մկրատով և պահպանման ժամկետը ընկել է կտրվածքի տակ, որն էլ դիտորդների խմբի կողմից արձանագրվել է որպես ժամկետը թաքցնելու միտումնավոր քայլ:

ՀՀ ոստիկանության շտաբ